Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նոյեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը անվանի արձակագիր, կինոսցենարիստ և կինոռեժիսոր Աղասի Այվազյանի մահվան կապակցությամբ ցավակցական գիր է հղել հանգուցյալի ընտանիքի անդամներին ու բոլոր մերձավորներին: Ցավակցագրում ասված է.

«*Սրտի խոր ցավով տեղեկացանք մեր ժողովրդի արժանավոր զավակ և հայ գրականության երախտավոր, արձակագիր Աղասի Այվազյանի մահվան մասին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում հանգուցյալի ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին, արվեստագետ ընկերներին ու մերձավորներին:*

Հոգելույս Աղասի Այվազյանը աստուածատուր իր շնորհով ստեղծեց մեծարժեք գործեր, որոնք հարստացնում են հայ գրականության լուսավոր անդաստանը: Մեծ ճանաչում ունեն և սիրված են նաև նրա սցենարներով նկարահանված կինոնկարները՝ լինելով հայ կինոարվեստի լավագույն ձեռքբերումներ: Հայ մշակույթին բերած իր ավանդով հանգուցյալը բարի հիշատակ է թողնում մեր ժողովրդի հոգում՝ ի Տեր ննջելով արժանավոր գործերի հարուստ վաստակով:

Լուսահոգի Աղասի Այվազյանի բեղմնավոր գործունեությունը և ծառայությունները մեր ժողովրդին ու Հայրենիքին գնահատված են նաև Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարձր պարգևով՝ «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո շքանշանով:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ Բարին Աստված Իր առատ ողորմությամբ գթա հավատավոր Իր ծառային՝ նորոգ հանգուցյալ Աղասի Այվազյանին, և խաղաղության մեջ ընդունի նրա լույս հոգին՝ արժանացնելով երանական հանգստյան:

Թող Երկնավոր Տերը Սուրբ Հոգու շնորհով սփոփանք ու մխիթարություն պարգևի Այվազյան ընտանիքի սգակիր անդամներին, բոլոր հարազատներին ու բարեկամներին»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ